ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Կոզիշսթի 1

№ 4429-Ա « 30 » հոկտեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԻՑԱ ՔԱՂԱՔ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով, հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ Դ.Գևորգյանի № Ն/62992-25 զեկուցագիրը և Նիցայի քաղաքապետարանի միջազգային հարաբերությունների տնօրեն Ֆառահ Շերիֆի հրավերը՝ Նիցայի քաղաքային խորհրդի հետ կապեր հաստատելու, երկկողմ հետաքրքրություն ունեցող հարցեր քննարկելու և փորձի փոխանակման նպատակով.

1.Երևան քաղաքի պատվիրակությանը՝ 2025 թվականի նոյեմբերի 12-ից 15-ը գործուղել Ֆրանսիայի Հանրապետության Նիցա քաղաք՝ հետևյալ կազմով.

Արմեն Գալջյան	Երևան քաղաքի ավագանու անդամ
Հայկ Միրզոյան	Երևան քաղաքի ավագանու անդամ
Անի Խաչատրյան	Երևան քաղաքի ավագանու անդամ
Միեր Բեջանյան	Երևան քաղաքի ավագանու անդամ
Հայկ Գրիգորյան	Երևան քաղաքի ավագանու անդամ
Վահան Ավագյան	Երևան քաղաքի ավագանու անդամ
Վահե Եսայան	Երևան քաղաքի ավագանու անդամ
Դավիթ Գևորգյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ

2.Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են Երևանի 2025 թվականի բյուջեի միջոցների հաշվին:

3.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ Դավիթ Գևորգյանի բացակայության ընթացքում աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության արարողակարգի բաժնի պետ Լուսինե Ղարիբյանին:

4.Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող

փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ